

Ավ. Իսահակյանի ծննդյան 150-ամյակին

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոգվածում ներկայացվում են Արևելքի մշակույթի հանդեպ Իսահակյանի մեծ հետաքրքրությունն ու առնչությունները: Մի կողմից՝ մանկուց ստացած ռոմանտիկ տպավորությունները, մյուս կողմից՝ Եվրոպայում գտնված տարիներին եվրոպական փիլիսոփաների (Նիցշե, Շոպենհաուեր, Կանտ և ուրիշներ) ու գրողների (Գյոթե, Բերանոսե, Դյումա...) կողմից Արևելքի ժողովուրդների բանահյուսության նկատմամբ ունեցած ոգևորությունը Իսահակյանին մղում են արևելյան բանահյուսության մշակմանը: Սակայն Արևելքը ընդհանրական հասկացություն է, որն ամփոփում է տարբեր ազգերի ու ժողովուրդների (հնդկական, չինական, պարսկական, ճապոնական, եգիպտական, հրեական...) ազգային խառնվածքը, լեզուն, կրոնը, փիլիսոփայությունը: Այս ժողովուրդներին պատկանող առասպելներում, ավանդություններում, զրույցներում Իսահակյանը շեշտադրում է յուրաքանչյուր ժողովրդի կենսահայեցողությունը, բարքերն ու սովորությունները: Իսահակյանին հաջողվում է շեշտել առանձին ժողովուրդների մտածողությունն ու վարքագիծը և տեսանելի դարձնել հին աշխարհից եկող իմաստուն գաղափարների հարստ և նշանակությունը:

Բանալի բառեր – *մշակույթ, բանահյուսություն, փիլիսոփայություն, կրոն, լեզուն, առասպել, ավանդություն, բուրդիզմ, զրադաշտականություն, կենսահայեցողություն*

Ժենյա Քալանթարյան – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր

Женя Калантарян – доктор филологических наук, профессор кафедры современной армянской литературы и литературной критики ЕГУ

Zhenya Kalantaryan – Doctor of Philological Sciences, Professor at YSU Chair of History and literary Criticism of Modern Armenian literature

Էլ փոստ՝ j.Kalantaryan@ysu.am <https://orcid.org/0009-0006-7400-5658>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 01.10.2025

Գրախոսվել է՝ 08.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

Իհարկե, որ ես պիտի օգտվեմ գլխավորապես հին Ասիայի կրոններից, էպոսներից ու պոեզիայից: Մենք պետք է եվրոպանանք, բայց Արևելքի ոգով, բայց Արևելքի արևը մեր հոգում:

Ավ. Իսահակյան, «Հիշատակարան»

Ավետիք Իսահակյանի՝ տարբեր պահերի հիշատակարանում գրառած խոստովանությունները հուշում են, որ նա աստիճանաբար ձևավորել է ստեղծագործական իր ծրագիրը՝ այնտեղ կարևոր տեղ հատկացնելով Արևելքի ժողովուրդների և՛ բանահյուսությանը, և՛ փիլիսոփայությանը: Բանաստեղծի այս հրապուրանքը մեծապես լայնացրել է նրա տեսադաշտը և յուրահատուկ երանգ հաղորդել նրա ամբողջ ստեղծագործությանը: Եվ ամենևին պատահական չէ, որ ռուս, ֆրանսիացի և այլազգի բազմաթիվ գրողներ շատ բարձր են գնահատել Իսահակյանի տաղանդը՝ տեսնելով նրա մեջ, ազգայինից բացի, համամարդկային զգացումներ և մյուս ժողովուրդներին ըստ արժանվույն գնահատելու առաքինություն: Այս հարցում, բացի մարդկային հոգեկերտվածքի առանձնահատկություններից, Իսահակյանի կյանքում կարևոր դեր են կատարել տասնամյակներ շարունակ այլ ժողովուրդների մշակույթի հետ շփվելը, նրանց կենցաղին, հոգեբանությանն ու վարքագծին մոտիկից ծանոթանալը: Երկար տարիներ թերևս պարտադրված լինելով ապրել Եվրոպայի նշանավոր կենտրոններում՝ Բեռլին, Ժնև, Վիեննա, Հռոմ, Վենետիկ, Փարիզ, այցելելով նաև այդ քաղաքներին հարակից շրջաններ, շփվելով ժամանակի խոշորագույն գրողների, արվեստի գործիչների, նկարիչների, ընդհանրապես մշակույթի բնագավառի տարբեր գործիչների հետ, տիրապետելով մի քանի լեզուների, նա հսկայական փորձ է ձեռք բերել օտարներին, իրականում նաև ընդհանրապես մարդկային կյանքը իրապես ճանաչելու առումով: Չմոռանանք, որ այս ամենից առաջ և այս ամենին զուգընթաց՝ Իսահակյանն իբրև ազատ ունկնդիր ուսումը շարունակել է Լայպցիգի և Ցյուրիխի համալսարաններում՝ հետևելով հիմնականում գրականության, փիլիսոփայության ու փիլիսոփայության պատմության դասընթացներին:

Կարևորն այն է, որ նշված հանգամանքներից առավել շատ Իսահակյանին մտահոգում էին սեփական գիտելիքները հարստացնելու ձգտումը և կամքը՝ նպատակին հասնելու համար: Նա ուսումնասիրում էր փիլիսոփաներին՝ Նիցշեին, Շոպենհաուերին, Հարտմանին, Կանտին, Դարվինին, նաև անտիկ փիլիսոփաներին՝ Արիստոտելին, Պլատոնին...: Իսահակյանն իր մեջ հանճար էր զգում, ցանկանում էր լինել «հոգու արիստոկրատ», հասնել բարձրագույն նպատակին: Իր ժամանակի փիլիսոփաների մեջ Իսահակյանին առավելապես գրավում էր Նիցշեն և, ընդհանրապես՝ մեծ, հայտնի մարդ դառնալու գաղափարը: «Ես պիտի հերոս լինեմ - օ՛, ինչ մեծ ու վեհ զգացմունք, երբ հերոսական գործերից - կռվից հետո կրծքիս վերքեր, ճակտիս կնճիռներ,

գլխիս ուռու թարմ պսակ՝ ընկերներիս հետ կմտնեմ-կվերադառնամ իմ ծննդավայրը...»¹: Երիտասարդական այս ինքնավստահությունը, դժվարությունների միայն ռոմանտիկ կողմի պատկերացումը զուգակցվում էին անպայման հարուստ գիտելիքներ ձեռք բերելու կամքի հետ, որն իրագործելու համար իբրև օրինակ սկզբնապես պատկերացնում էր Նիցշեին՝ հետագայում որոշ ճշգրտումներ կատարելով փիլիսոփայական իր նախասիրությունների մեջ: Հետաքրքրականն այն է, որ ձգտելով շատ բարձր նպատակների, ցանկանալով լինել իսկապես հերոս ու հանճար՝ Բասիակյանը պատրաստ էր իր գիտելիքները ծառայեցնել ժողովրդին:

Լինելով Եվրոպայի կենտրոնում, ուսումնասիրելով իր նշած նշանավոր դեմքերի աշխատությունները՝ Բասիակյանը նախընտրում է Արևելքի փիլիսոփայությունն ու մշակույթը: Խորքային առումով թերևս զարմանալի չէ այս ընտրությունը, որովհետև իրականում եվրոպացիները ավելի բանական են, ունեն սթափ մտածողություն, Արևելքի ժողովուրդը, առաջին հերթին բանաստեղծները, ավելի հուզական են ու զգացմունքային, ինչն ավելի մոտ է Բասիակյանի խառնվածքին: Այս առումով հատկանշական կարելի է համարել նրա բնութագրություններից մեկը. «Խելացի են ֆրանսիացի գրողները, նկարիչները, բայց նրանց պակասում է զգայականը, կիրքը, տարերայինը, նախնական նյութը՝ *matière le primitive* բնագդականը...»²: Իհարկե, Բասիակյանը գնահատում է Եվրոպայի քաղաքակրթությունը, բայց դա համարում է մարդկային էության արտաքին շերտը և առաջնությունը տալիս է խորքային բովանդակությանը. «Ես թողեցի Եվրոպայի կեղևը և ընդունեցի հայրենիքինըս – ազատ և արձակ: Բսկ բովանդակությունս – համաշխարհային» (Հիշ., էջ 192): Այս ընտրությունն արդեն զուտ ցանկություն չէ, այլ գործունեության ծրագիր, որ նա իրագործում է մեծ հաջողությամբ: Բասիակյանի ընտրության մեջ որոշակի դեր է կատարում ոչ միայն երիտասարդական հասակը, այլև նրա խառնվածքի որոշակի ռոմանտիզմը, որը բանաստեղծին հուշում է չպեղված արժեքներ հայտնաբերել դարերով հին և հեռավոր Արևելքում, ինչը բորբոքում էր բանաստեղծի երևակայությունը: «Ասիան, Արևելքը, որ հեռու է եվրոպական կոմֆորտից, որը խլում է մարդու ամբողջ ժամանակը, – այնտեղ մարդը, անհատը գոհ է իր աղքատ ապրուստից, բայց և մտածում է շատ բարձր բաների, հարցերի վերա: Արևելքը պոեզիայի և իդեալիզմի աշխարհ է...» (Հիշ., էջ 264): Իհարկե, դժվար չէ համոզվել, որ Եվրոպայի և Արևելքի միջև ընտրություն կատարելու հանգամանքը, թերևս հակասությունը թվացյալ է, որովհետև Արևելքի մշակույթին դիմելն ուներ մի քանի հիմնավոր պատճառներ: Նախ՝ դեռևս իր հայրենիքում՝ Ղազարապատում, եղած ժամանակ Բասիակյանը հաճախ է հնարավորություն ունեցել շփվելու թափառական աշուղ-

¹ Բասիակյան Ավ., 1977: Հիշատակարան, Եր., «Սովետական գրող» հրատ., էջ 113: Նույն աղբյուրից էջերը կնշվեն տեղում՝ (Հիշ, էջ ...) կերպով:

² Բասիակյան Ավ., 2001: Աֆորիզմներ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., էջ 326:

ների հետ, լսելու նրանց երգերը, ոգևորվելու դրանցով: Այդ երգերը մեծ ազդեցություն են թողել պատանի Բսահակյանի վրա, բորբոքել նրա երևակայությունը, ներքաշել երգի ու հեքիաթի աշխարհ: «Ինչքա՛ն, ինչքա՛ն էի սիրում աշուղ ամուն: Երբ գալիս էր, տոն էր սկսվում ինձ համար... Նրա սագն ու հեքիաթը այլափոխում էին իմ աչքում իրական շրջապատը: Հանկարծ մեր գավառի լեռները, ձորերը, դաշտերը վերածվում էին ուրիշ տեսակ մի աշխարհի, աննկարագրելի գեղեցիկ, առասպելական: Հրաշքի աշխարհ, որի լեռների բաշերով թռչում էին հրեղեն ձիերը, կտրիճները գնում էին անմահական խնձոր բերելու, չքնադագեղ աղջիկները մարմարյա ապարանքների մեջ կարոտով սպասում էին անվեհեր կտրիճներին, որոնց մեջ տեսնում էի և ինձ»³: Այդ տպավորությունների տակ է Բսահակյանը գրել որոշ լեգենդներ ու ավանդություններ (օրինակ՝ «Իրիցկնկա աղբյուրը», «Փերին» և այլն): Հետագայում բանաստեղծը պետք է խոստովանի. «Ես ավելի շատ պարտական եմ ֆոլկլորին, կարդացածս գրքերին, իմ թափառումներին և, իհարկե, Շիրակի պատմական-ճարտարապետական հուշարձաններին՝ Անի, Երեբունյք, Հառիչ, Մրեն, Մարմաշեն, Տեկոր... Դրանք են կաղապարել իմ հոգին ու հոգեբանությունը»⁴:

Նշվածը այն կարևոր պատճառներից մեկն է, որը Բսահակյանի ուշադրության կենտրոնում է պահում և՛ բանահյուսությունը, որի մասին ինքը խոստովանություն է անում, և՛ Արևելքն ընդհանրապես իր դիցաբանությամբ, առասպելներով և՛, իհարկե, փիլիսոփայությամբ: Բանաստեղծի ստեղծագործությունների մի զգալի մասի հիմքը ժողովրդական բանահյուսությունն է, որի հիման վրա է նա ստեղծել իր լեգենդները, զրույցները, առասպելները, առակները, հաճախ նաև հեքիաթները, որոնք, այսպես թե այնպես, գալիս են ժողովրդից: Ինչպես հայ գրողներից շատերը, այդպես էլ Բսահակյանը չի բավարարվել հայ բանահյուսության օրինակներով, այլ հաճախ է դիմել այլ ազգերի՝ մասնավորապես արևելյան ժողովուրդների բանահյուսությանը: Այդ ժամանակ շատ տարածված էին այսպես կոչված թափառական սյուժեները, որոնք նոր աղբյուր էին գրողների համար և նրանց հնարավորություն էին տալիս դուրս գալու ազգային շրջանակներից, լայնացնելու իրենց հորիզոնը: Այս տեսակետից առանձնահատուկ դեր ունեն Արևելքը, որի հինավուրց փիլիսոփայությունը, որը շատ կարևոր էր անցյալում, կրկին վերակենդանանում է: Այս հարցում, իհարկե, Բսահակյանը մենակ չէր: Նա ինքը բերում է Նիզամի Գյանջևիի օրինակը. «Նիզամին իր դիդակտիկական-փիլիսոփայական, ռոմանտիկ-ասպետական և ֆանտաստիկական պոեմների նյութերը քաղել է Արևելքում հին ժամանակներից ի վեր տարած-

³ **Բսահակյան Ավիկ**, 2000: Ավետիք Բսահակյան, Գիտական կենսագրություն, գիրք 1, Եր., էջ 67-68, 119:

⁴ **Ինձիկյան Արամ**, 1977: Ավետիք Բսահակյան, Եր., էջ 241:

ված ավանդություններից, լեգենդներից, գրույցներից, նաև իր ժողովրդի ֆոլկլորային գանձարանից»⁵:

Կար ոչ պակաս մի կարևոր հանգամանք: Դեռևս մի քանի դար առաջ Եվրոպայում սկսել էին մեծ ուշադրություն դարձնել Արևելքին: Իսահակյանի վրա կարևոր ազդեցություն են ունենում նաև Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը» և նրա մեկնությունները տարբեր մարդկանց կողմից: Իսահակյանին բախտ է վիճակվում սովորել նույն համալսարանում (Լայպցիգի), որտեղ 1765 թվականին սովորել էր Գյոթեն, և որտեղ Իսահակյանը զգում է Գյոթեի անտեսանելի ներկայությունը: Գյոթեից բացի, և նրանից հետո գերմանական շատ փիլիսոփաներ ևս մեծապես հետաքրքրված էին Արևելքի փիլիսոփայությամբ և զբաղվում էին այդ փիլիսոփայության մեկնաբանություններով: Այս մասին Ավիկ Իսահակյանը գրում է. «Իսահակյանին միշտ հետաքրքրել է Արևելքի հին իմաստությունների մեկնաբանումը գերմանական դասական հեղինակների և փիլիսոփաների կողմից, լինի դա Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը» պոետական շարքը կամ Օլդենբերգի նշանավոր գիրքը Բուդդայի կյանքի մասին: Բայց առաջին հերթին, Նիցշեի նշանավոր մեկնաբանությունները հին պարսկական կրոնական ուսմունքներից մեկի՝ զրադաշտականության հիմնադիր և քարոզիչ Զրադաշտի (Զորոաստրի) կյանքի և ուսմունքի վերաբերյալ»⁶: Արևելքի նկատմամբ բուռն հետաքրքրությունը չի սահմանափակվում բուն Եվրոպայով, թափանցում է նաև հայ իրականություն, ի դեպ՝ դարձյալ գերմանական նախասիրությունների ճանապարհով: Այս առումով կարելի է հիշատակել Ստեփանոս Նազարյանի դոկտորական ատենախոսությունը Ֆիրդուսու մասին, որտեղ նա կարծես բացահայտում է Արևելքի պոեզիայի նկատմամբ եվրոպացիների հետաքրքրության պատճառը՝ գրելով. «Ֆիրդուսու մոտ չի նկատվում ձգտում դեպի արտահայտությունների արհեստականությունը. դեպքերի պատմությունն այստեղ ասիական ոգու փարթամությամբ նրբերանգված է առասպելներով, որ նպաստում է նկարագրությունների կատարելությանը: ... Այսպիսի զարմանալի կառուցվածքով բանաստեղծական ստեղծագործությունն արժանի է լուսավորյալ եվրոպացու ուշադրությանը: Հեթանոս աշխարհի հերոսներից, աստվածներից և աստվածուհիներից բացի, որոնք դարեր շարունակ խաղացել են հերոսական կյանքի բեմում, եվրոպական միտքը իր համար հարուստ սնունդ, բարձր հաճույք կգտներ նոր մտահղացումների, երևակայության նոր պատկերների, բարքերի նոր նկարագրերի, խիզախ ռազմիկների նոր մարտադաշտերի այդ աշխարհում»⁷:

Այստեղ Նազարյանը բացում է եվրոպացիների՝ Արևելքով հետաքրքրվելու գաղտնիքը. **Եվրոպային անհրաժեշտ էր մտքերի, գաղափարների, հույզերի**

⁵ Իսահակյան Ավ., 1977: Երկերի ժողովածու, հ. 5, Եր., «Սովետական գրող» հրատ., էջ, 253:

⁶ Իսահակյան Ավիկ, նշվ. աշխ., էջ 248:

⁷ Назарян Ст., 1851. Абулькасим Фирдоуси Туси: творец книги царей известной под названием Шах-Наме. М., с. 35.

ու պատկերների թարմություն, ինչը կարող էր նոր շունչ հաղորդել եվրոպական արվեստին ու փիլիսոփայությանը: Նախորդ դարավերջից սկսած՝ եվրոպական գիտությունների՝ կենսաբանության, հոգեբանության, ֆիզիկայի և այլ բնագավառներում նկատելի նվաճումները, միաժամանակ տնտեսական դժվարությունները կարծես գերհոգնած վիճակ էին ստեղծել Եվրոպայում, որը զարթոնքի ուղիներ էր փնտրում: Նպատակին հասնելու ուղիներից մեկը դարձավ Արևելքը: Սակայն այստեղ չենք կարող անտեսել մի հանգամանք ևս: Պատկերավոր ասած՝ թեև Արևելքը «թարմ արյուն էր ներարկում» Արևմուտքին, հատկապես Եվրոպային, բայց Եվրոպան շարունակում էր իր առավելության բարձրությունից նայել Արևելքին: Արաբ արևելագետ Էդուարդ Ու. Մայիդը այդ մասին գրում է. «...Եվրոպական մշակոյթի գլխաւոր բաղկացուցիչը ճիշդ այն է՝ ինչ որ զայն միահեծան դարձուցած է Եվրոպայէն ներս եւ դուրս միաժամանակ, այսինքն՝ եւրոպական ինքնութեան գաղափարը որպէս գերադաս ինքնութիւն, համեմատած բոլոր ոչ եւրոպական ժողովուրդներուն եւ մշակոյթներուն»⁸: Ու. Մայիդը Եվրոպայի «բարեհոգության» ներքո վտանգներ է տեսնում, որի մասին ակնարկում է. «Առաւել եւս կ'այ Արեւելքի մասին եւրոպական գաղափարներու միահեծանութիւնը - գաղափարներ, որոնք իրենց կարգին կը վերարտադրեն արեւելեան յետամնացութեան հանդէպ եւրոպական գերադասութեան գաղափարները...» (ն. տ.):

Եվրոպայում Իսահակյանի ուսանած տարիները համընկան Արևելքի նկատմամբ փնտրտուքի հետ և իրենց շրջապատույթի մեջ առան նրան: Սակայն ի սկզբանե պետք է նշել, որ բանաստեղծը որոնումների մեջ չկորցրեց իր անհատականությունը, այլ ազդեցությունների, նմանությունների, ոգևորությունների ոլորտից դուրս եկավ հարստացած գիտելիքներով և իր ինքնությունը գտած: Այսինքն՝ նա սովորեց բոլորից, ազդվեց շատերից և, եթե կարելի է ասել՝ փիլիսոփաներից ստացած բեռն ուսերին՝ գնաց սեփական ճանապարհով: Բնչպես շատ եվրոպացիների, այնպես էլ Իսահակյանին ճանապարհը «տարավ» դեպի Արևելք: Ե՛վ Իսահակյանի թողած գրական ժառանգության տարբեր էջերում, և՛ ժամանակակիցների հուշերում բազմիցս շոշափվում է Արևելքի կարևորության խնդիրը: Ի դեպ, Արևելքը ճանաչելու համար Իսահակյանը, թվում է, կարիք չունեի Արևելք գնալու, որովհետև ամբողջ Եվրոպայի համար Արևելքը դարձել էր ուշադրության առարկա, որը Շպենգլերի բնորոշումով՝ «դեպի մայրամուտ գնացող» Եվրոպային կարող էր փրկություն բերել: Պատկերավոր ասած՝ Եվրոպան Արևելքը «տեղափոխել էր իր մեջ» մատչելի դարձնելով արևելյան արժեքների յուրացումը: Ավետիք Իսահակյանի որդի Վիգեն Իսահակյանն իր «Հայրս» գրքում պատմում է Եվրոպայում բացված մի հրաշալի թանգարանի մասին, որն ամբողջովին հագեցած էր արևելյան ոգով. «Իրոք, այստեղ հավաքված էին հին արվեստի արժեքավոր նմուշներ, որոնք

⁸ Էդուարդ Ու. Մայիդ, 2025: Արևելաբանություն, Եր., էջ 54:

բերվել էին Չինաստանից, Ճապոնիայից, Հնդկաստանից, Պարսկաստանից»⁹: Նույն գրքում նա շարունակում է. «Հայրս մխիթարանք է որոնում Հեռավոր Արևելքի փիլիսոփայության մեջ, որի, մանավանդ բուդդայիզմի ուսմունքի հանդեպ ինքը դեռևս երիտասարդ տարիքում մեծ հետաքրքրություն էր հանդես բերել: Իսկ սա քարոզում էր հոգու հեզություն ու խոնարհություն, պետք է մեջդ մարես քո անհատական կյանքը և թողնես քեզ տիեզերական կամքին» (ն.տ., էջ 101-102), այսինքն՝ նոր բարոյագիտություն, որ տանում էր դեպի ասկետիզմ: Մի ուրիշ առիթով Չարենցի հետ զրուցելիս Իսահակյանը հիշեցնում է Վլադիմիր Սոլովյովի խոսքը՝ «Արևելքից է գալու լույսը» (ն.տ., էջ 199): Արևելքով Իսահակյանի ոգևորվածության փաստերը շատ են թե՛ իր՝ բանաստեղծի գործերում, թե՛ ուրիշների հիշատակություններում:

Սակայն Արևելք կոչվածը ընդհանրացված երևույթ է, որն իր մեջ ամփոփում է տարբեր երկրներ, ժողովուրդներ, ազգեր, լեզուներ, կրոններ, բարքեր: Իրականության մեջ Արևելքը աշխարհագրական հասկացություն է, երկրագնդի չորս կողմերից մեկը, որ հակադիր է Արևմուտքին: Այն նաև մշակութային առումով է հակադիր Արևմուտքին, ամեն դեպքում՝ տարբեր է նրանից: Իրականում Իսահակյանի փնտրտուքը վերաբերում է ոչ թե մեկ, այլ մի քանի մշակույթների՝ արաբական, պարսկական, չինական, հնդկական, հրեական և այլն: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ հայկական մշակույթը աշխարհագրական առումով միջանկյալ դիրք է գրավում Արևմուտքի և Արևելքի միջև և, ըստ էության, գաղափարապես մոտ է Արևմուտքին, իսկ հուզականությամբ՝ Արևելքին, ապա կարող ենք ասել, որ Իսահակյանը ձեռնամուխ է եղել շատ բարդ մի խնդրի: Չմոռանանք նաև մի կարևոր հանգամանք. ինչպես արդեն ասվել է, դեռևս մանուկ հասակում Իսահակյանը լսել է թափառիկ աշուղներին, որոնք արևելյան հեքիաթներ էին պատմում ու երգեր երգում, ինչը մեծ տպավորություն է թողել մանուկ Իսահակյանի վրա, բորբոքել նրա ռոմանտիկ երևակայությունը: Այսինքն՝ Արևելքն արդեն որոշակի տեղ ուներ Իսահակյանի սրտում: Բայց կարելի է մտածել, որ եթե դազարապատյան շրջանի իսահակյանական ոգևորությունը նրա պատանեկան ռոմանտիկ տպավորությունների արդյունք էր, որ ավելի շատ ազդում էր նրա երևակայության, քան գիտակցության վրա, հետագայում նա գիտակցական ընտրություն է կատարում՝ արևելյան բանահյուսության մեջ փնտրելով փիլիսոփայական խորքային գաղափարներ:

Իսահակյանը հենվում է հիմնականում ժողովրդական բանահյուսության վրա, իր մշակումներն անում այդ բնագավառից: Ի սկզբանե նա շատ բարձր էր գնահատում ժողովրդական բանահյուսությունը: Մտ. Լիսիցյանին գրած նամակում բանաստեղծը խոստովանում է, որ իր վրա մեծ ազդեցություն է թողնում ժողովրդական բանահյուսությունը, և ինքը ոգևորված է դրանով.

⁹ Իսահակյան Վ., 2011: Հայրս, Եր., «Գասպրինտ» հրատ., էջ 59:

«...այժմ պրոֆեսորի առաջնորդությամբ և ընտրությամբ կարդում ենք ազգերի դյուցազնական գրականությունից – Զենդարվեստից, Շահ-Նամեից, Ղուրանից, Հին Կտակարանից, Հոմերոսից, Վիրգիլիոսից, Ռոլանդից, Սիդից, Նիբելունգներից, Կուդրոնից, Իլյա Մուրոմեցից և այլն: Այդ բոլորի վրա - մանավանդ այդ մասնագիտության վրա ես այժմ կատարյալ սիրահարված եմ»¹⁰: Բանաստեղծը նաև կարծում է, որ հայ բանահյուսությունը անհրաժեշտ չափով չի ուսումնասիրված, հայ դյուցազունները՝ Հայկն ու Արամը, Դավիթն ու Մհերը և մյուս հերոսական կերպարները, անհրաժեշտ չափով չեն ուսումնասիրվել ու գնահատվել: Այդ պատճառով էլ այդպես մտածողները նրա աչքում երևում են «հայ ժողովրդի պատմությունը անծանոթ մարդիկ»: «Մի՞թե մեր Հայկն ու Արամը, Արան ու Տիգրանը, Վահագն ու Շարան, Արամազդն ու Շիրհարը, Դավիթն ու Մհերը...նույնպիսի ազգային դյուցազներ – ազգի բովանդակություններ չեն, ինչպես Ռոստոմը, Սիգֆրիդը Հերակլը, և այլն:...Երբ ես հայրենիք էի,- շարունակում է Իսահակյանը,- մեր ամեն բանը – գրականություն, թատրոն, գեղարվեստ, լրագիր խոշորացույցով էի տեսնում, իսկ հիմա այստեղ – մեր ամեն բանը՝ տղայական խաղալիք է թվում ինձ, - և հանկարծ 4000 տարի կյանք ունեցող ազգը դուրս է գալիս անհայր, անմայր, անտուն, անհայրենիք, անանցյալ-ինչո՞ւ, որովհետև մենք ժողովրդի մեջ, նրա հետ, նրանով չենք ապրում...», - գրում է Իսահակյանը (ն.տ. էջ 19):

Նախ՝ Իսահակյանի այս տպավորությունից հետո բավականաչափ ուսումնասիրվել է հայ բանահյուսությունը ու նաև շատ գեղարվեստական մշակումներ են կատարվել այդ թեմաներով: Երկրորդ՝ հայ բանահյուսության գեղարվեստական մշակումներն արծարծում են հիմնականում հայրենասիրական հարցեր, իսկ ահա արևելյան բանահյուսության թեմաներով Իսահակյանի մշակումներն ունեն գերազանցապես փիլիսոփայական բովանդակային ուղղվածություն: Այսինքն՝ ժողովրդական բանահյուսության վրա հիմնված իսահակյանական յուրաքանչյուր մշակում, որ ժողովրդին էլ այն վերաբերի, խորքում ունի փիլիսոփայական մի ընդհանրացում: Դա կարելի է ցույց տալ Իսահակյանի մշակած շատ գործերի մեջ: Օրինակ՝ «Սաադիի վերջին գարունը», որ տեղ է գտել հեղինակի 5-րդ հատորում (2014 թ.)¹¹, վերջանում է շատ խորքային մի տողով՝ «Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...» (էջ 80): Այս միտքն այնքան ընդհանրական է ու ընկալելի, որ թվում է, թե յուրաքանչյուրը կարող էր հենց այդպես էլ մտածել, և կարծես դրա համար հիմք կա: Իսահակյանն այս փիլիսոփայական խոհը գրել է 1923 թ. Վենետիկում, բայց հարցի շուրջ մտածումը տևական ընթացքի արդյունք է: Դեռևս 1893 թ. նա իր հիշատակարանում գրել է «...Եթե բնության հզոր օրենք-

¹⁰ Իսահակյան Ավ., 1979: Երկերի ժողովածու, հ. 6, Եր., «Սովետական գրող» հրատ., էջ 18:

¹¹ Այս մասին տե՛ս Իսահակյան Ավ., 2014: Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 5, էջ 919 (այսուհետև այս հատորից մեջբերումների հղումները կտրվեն տեքստում՝ հատոր, տարբերակ, էջ):

ների դիմաց անխտիր հավասար են մարդիկ, էլ որտեղից կարելի է լինել «մեծ մարդ»: Օսվում ես ակամա, ապրում ես աննպատակ, մեռնում ես ակամա և դարձյալ ծնվում-ապրում-մեռնում-փոշիանում. էլ ի՞նչ «մեծ մարդ» (Հիշ., 1893, էջ 47): Տպավորությունն այնպիսին է, որ ինչքան էլ բանահյուսության ու դիցաբանության բովանդակությունը ծանոթ լինի բանաստեղծին, նա դրանք զուգակցել ու համապատասխանացրել է սեփական խոհերին ու ընկալմանը: Այս ամենից հետևում է, որ նա ընտրում է բարոյախոսական ու դաստիարակչական այնպիսի թեմաներ, որոնք իրենց փիլիսոփայական խորքով հրապուրիչ են և մոտ են սեփական կենսահայեցողությանը:

Կարելի է ասել, որ Իսահակյանին շատ կոդմերով ավելի մոտ է եղել պարսկական մշակույթը: Դեռևս պատանեկան հասակում Իսահակյանը փորձել է թարգմանել Հաֆեզի սիրային բանաստեղծությունները և այդ նպատակով այցելել հարևան գյուղ՝ այնտեղ պարսիկ մի բեյից պարսկերեն սովորելու համար: Պարսկական մշակույթը ավելի մոտ զգալու առումով կար ավելի կարևոր պատճառ: Դա Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» գիրքն է, որի հիմքը պարսկական զրադաշտական կրոնն էր, և որը շատ մոտ էր Իսահակյանի սրտին՝ գուցե ավելի շատ Նիցշեով, քան թե բուն կրոնով հրապուրվելու առումով: Պատահական չէ, որ նա թարգմանել է Նիցշեի այդ գիրքը:

Բանահյուսության վրա հիմնված մշակումներն ունեն մի առանձնահատկություն, որը բանավեճերի տեղիք է տալիս: Խնդիրն այն է, որ առասպելները մի ժողովրդից անցնում են մյուսին, կրում նոր ազդեցություններ, փոխանցվում մի ուրիշ ազգի, դառնում են մի նոր տարբերակ, որի «ծննդավայրը» եթե չի էլ կորչում, դառնում է թեական: Այդպիսի մի գործ է «Շիդհարը» առասպելը, որը Իսահակյանի տարբեր տարիների մշակումների պարագայում մեկ կոչվել է «Թափառական Հրեան (Հայկական առասպել)», մերթ՝ «Շիդհարը (Պարսկական առասպել)» (հ.5, 2014, էջ 919): Ամենայն հավանականությամբ Շիդհարի մասին Իսահակյանը լսել է նախ հայերեն (այստեղից էլ՝ «հայկական առասպել» անվանումը), հետագայում գտել է իրական աղբյուրը: Շիդհարն առասպելներում կրել է Ահասֆեր, Ահասֆերուս անվանումները, որոնց ընթերցողը հանդիպում է նաև Մատթեոս Փարիզեցու հիշատակարանում (տե՛ս ն.տ.): Մի քիչ անհավանական է թվում առասպելին գերմանական ծագում վերագրելը (ընդ որում՝ ոչ միանշանակ), որին հանդիպում ենք նշված ծանոթագրության մեջ. «Ինչպես վկայում է հեղինակն ինքը «Հայրենի հուշեր»-ում, տակավին 10-12 տարեկան հասակում Ղազարապատում է լսել թափառական հրեայի հայկական գրույցը (ԵԺ IV, 1975, էջ 118): Գերմանական առասպելի և Օհան տացուի գրույցի միահյուսումից բանաստեղծը կերտել է վայրկյանի և հավերժության մասին փիլիսոփայող մեծ թափառականի կերպարը, որին մերթ՝ Ահասվեր անունն է տվել, մերթ՝ Շիդհար»¹²: Հետաքրքրու-

¹² Երկու տարբեր հրատարակությունների հիշատակումը պայմանավորված է այն բանով, որ 2014 թ. հիշատակումը հենվում է նաև 1975 թ. 4-րդ հատորում տեղ գտած հուշերի վրա:

յունից գուրկ չէ այն հանգամանքը, որ սկզբնապես այդ առասպելը (առանց ստեղծման տեղի նշման) Իսահակյանը գրել է հայրենի Ղազարապատում՝ «Թափառական Հրեա» (Հայկական առասպել) ենթավերնագրով: Հնարավոր է, որ այդ առասպելի մասին հեղինակը լսել է հենց Շիրակում, որն էլ նրան հիմք է տվել լրացուցիչ վերնագրի համար: Այսուհանդերձ, էականը փիլիսոփայական բովանդակությունն է, տիեզերական հավերժության և մարդ արարածի անցողիկ, ակնթարթային կյանքի հակադրությունը, որի մասին առօրյա կյանքի ճղճիմ հոգսերի մեջ թաղված մարդը չի էլ մտածում: «Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին, խորհում է Շիրհարը: ...Սակայն, ո՛վ փրկարար պատրանք...Իրենց խիտունջից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և օրենքներ են սահմանում անհունին և անսահմանին...Անապատի վրայից սահող ամպի ստվերից ավելի ստահող է ձեր էությունը...Սակայն տեսնենք վաղը ի՞նչ է լինելու...» (հ.5, 2014, էջ 115): Հավերժի տարբեր փուլերից անցնող Շիրհարն ինքը հենց հավերժի խորհրդանիշն է՝ անցնող դարերին ականատես ու նորին սպասող, ում համար կյանքը հավերժ փոփոխվում է, իսկ մահկանացու մարդու համար այդ իմացությունն անհասանելի է ...: Ըստ այսմ՝ այս առասպելը կարելի է վերագրել բոլոր ազգերին, ինչը հերթականորեն արել է Իսահակյանը:

Այսուհանդերձ, ընդհանուր Արևելքի յուրաքանչյուր առանձին երկիր ունի իր առանձին բարքերն ու ապրելակերպը, ուստի Իսահակյանն իր մշակումների և դրանց փիլիսոփայական ընդհանրացումների մեջ շեշտադրում էր տվյալ ազգին բնորոշ կենսահայեցողությունը: Այս առումով կարելի է ասել, որ Իսահակյանի բազմաթիվ գրույցների, առասպելների, վիպասքերի, էպոսների կարճառոտ փիլիսոփայական ընդհանրացումների մեջ միանգամայն տեսանելի է դառնում այս կամ այն ազգի կամ ժողովրդի մտածողությունը: Այս պարագայում Իսահակյանի ստեղծագործության մեջ վերացական Արևելքը որոշակիանում է իր առանձին միավորների մեջ:

Իսահակյանը տարբեր ժողովուրդների բանահյուսությունից ընտրում է տարբեր թեմաներ և տալիս ժանրային համապատասխան կադապար: Ահա հնդկական «Ուշինարա» գրույցը, որի հիմքում ընկած է մարդկային առաքիության ու պարտքի սրբության մի օրինակ: Ուշինարան արդար և իմաստուն դատավոր է, որի ազնվությունն ու բարությունը կասկածի տակ են դրվում, երբ նրա սենյակն է թռչում անգղից հալածված մի աղավնի և օգնություն խնդրում: Անգղը հետևում է նրան և պահանջում աղավնուն՝ բացատրելով, որ ինքը միայն աղավնու միս է ուտում: Անգղը ձևացնում է, որ պատրաստ է աղավնուն հանգիստ թողնել, եթե Ուշինարան իր մարմնից համապատասխան քանակով միս տա: Ուշինարան համաձայնվում է, բայց նրա փերթ առ փերթ հռչակված մարմինը չի հավասարակշռում աղավնու քաշին, և նա ստիպված է լինում իրեն գոհել հանուն աղավնու: Այս գրույցը ժանրային իմաստով ավելի շատ առակ է հիշեցնում, որովհետև անգղի տեսքով հանդես եկած Ինդրան

զրույցն ամփոփում է առակին բնորոշ բարոյախոսությամբ. «Ժողովուրդների մեջ պիտի չհանա քո անունը, և հավիտյան պիտի ապրիս դու անմահ փառքով ու փայլով, որովհետև պարտքի սրբության հավատարիմ եղար» (հ.5, 2014, էջ 212):

Հնդկական դիցաբանությունից, առասպելներից Իսահակյանի ընտրած ու մշակած շատ նյութեր իրենց բովանդակությամբ որոշակիորեն արտահայտում են հնդիկների ազգային բնավորությունը: Հնդկական առասպելներն ու զրույցներն ունեն բարի, մարդասիրական բնույթ (անշուշտ, ոչ մի տեղ բացառությունները չեն բացառվում) և ծառայում են մարդու փրկությանը: Նման բովանդակություն ունի «Բուդդհան թոչուն» առասպելը, որը պատմում է այն մասին, թե ինչպես թոչունի տեսք ստացած Բուդդհանը իրեն նետում է խարույկի մեջ՝ դառնալով քաղցած երեխային կերակրելու խորոված: Հանուն մարդու փրկության: Թոչունի հոգին կրկին դառնում է մարդաձև Բուդդհան՝ իրականացնելու համար «հին չորս սրբազան ճշմարտությունները – փրկելու համար մարդուն, ծնվելու, ծերանալու և մեռնելու անհրաժեշտության տանջանքներից և հասնելու համար բացարձակ երանությանը-Նիրվանային» (հ. 5, 2014, էջ 220): Այս առասպելի մեջ դրսևորվել է ոչ միայն հնդիկների ազգային խառնվածքը, այլև նրանց կրոնը, հավատը, որը օգնում է հաղթահարելու կյանքի բազմաթիվ դժվարություններ: Թե՛ պարսկական, թե՛ հնդկական ավանդությունների աստվածները պատժելուց բացի, ներել գիտեն և մարդուն մեղքը ճանաչելու ու ներվելու հնարավորություն են տալիս: Ահա այդ վկայություններից մեկը՝ «Օմար Խայամի վեճը աստծու հետ» ավանդությունը: Երբ պարսիկ բանաստեղծ Օմար Խայամը «ոսկեղեն նարգիզների մեջ նստած» պատրաստվում էր գինի վայելելու, չար քամին արագորեն վրա է հասնում նթափում գինին հողի վրա: Քանի որ ամեն ինչի հիմքը և պատճառը Աստված է, ուստի Խայամը հանդիմանում է Աստծուն. «Թո՛ղ բերանը լցվի հողով, // Ուրը խմեց իմ գինին: // Ի՞նչ արեցիր, միթե դու էլ // Թունդ հարբած ես, աստվա՛ծ իմ»: Աստված պատժում է Խայամին հանդգնության համար՝ նրա բերանը ծռելով ու լեզուն կարկամ դարձնելով: Պատժված միջոցին անգամ Խայամը հանդիմանում է Աստծուն՝ «Թե վատ անեմ, թե վատ խոսեմ, // Դու էլ ինձ վատ պատիժ տաս, // Ուրեմն ինչ է իմ ու քո մեջ // Տարբերությունն, աստվա՛ծ իմ»: Աստված զարմանում է, թե ինչպես մի հողեղեն արարած կարող է նման խելացի լինել, ներում է Խայամին՝ «վերստին շնորհելով նրան և՛ ծիրանի գինի, և՛ ավելի իմաստուն լեզու»: Մինչև այժմ քննարկված գործերը կարծես վերջանում են երկնային ուժերի և մարդկանց հաշտությամբ:

Ավ. Իսահակյանի մշակած արևելյան լեգենդների ու առասպելների մեջ կան բռնակալների կերպարներ, որոնք աչքի են ընկնում դաժանությամբ, ինչպիսիք են չինական պետության տեր Շի-Հոանգ-Տի Բողդիխանը և Մեծ մոնղոլ Չինգիզ խանը: Մեր ստացած տպավորությունը այս տիրակալների մասին կարող է համոզիչ չլինել, բայց մեզ թվում է, թե Հեռավոր Արևելքի այս խա-

ներն իրենց վարքագծով էականորեն տարբերվում են Միջին Արևելքի՝ Պարսկաստանի, Հնդկաստանի տիրակալներից: Հնարավոր է, որ այս պարագայում Իսահակյանի մշակումների ընտրության մեջ պակասում են «բարի թագավորները», ամեն դեպքում հիշված գործերում շեշտը դրվել է բռնակալների դաժանության վրա: Բողոքիսանի նկարագրությունը սկսվում է չափից դուրս մոայլ գույներով, այնքան, որ ընթերցողը չի կարող որևէ դրական սպասում ունենալ այս բռնակալից: «Երկնային պետության տերը՝ Շի-Հոանգ-Տի Բողոքիսանը, երկնքի պես հպարտ ու բարձրամիտ, նստել էր փղոսկրե գահույքի վրա՝ մոայլ ու դաժան: Նրա աչքերի մեջ մրրկում էր զայրացկոտ Դեղին ծովը, որ անդուլ ճանկոտում է Չինու ափերը: Եվ նրա խոշոր ճակատի վրա կնճիռները Գոբի անապատի օձերի նման գալարվում էին: Բազմել էր նա մտատանջ և դժնատեսիլ, ինչպես մթազին ամպը, որ շանթ ու որոտ ունի կրծքում խտացած» (հ.5, 2014, էջ 117): Այս մոայլ նախաբանն արդեն իսկ ժխտում է Բողոքիսանից որևէ դրական սպասում: Նշված առասպելն ունի խորքային շերտեր, որոնցում փիլիսոփայական հարցերը տարբեր տեսանկյունից են ներկայացվում: Առաջին հայացքից ընթերցողի առաջ պատկերանում է բռնակալ Բողոքիսանը, ով հրամայում է ոչնչացնել բոլոր գրքերը, մագաղաթները, որովհետև դրանք չեն կարողանում բացահայտել, թե ինչ է նյութը, ինչ է տիեզերքը, ինչ է ժամանակն ու տարածությունը: Հարցերի պատասխանները չգտնելու համար բոլոր գրքերն այրում են Բողոքիսանի հրամանով, իսկ հարցերին պատասխանել անկարող իմաստունները՝ գլխատվում: Խնդիրն այստեղ Բողոքիսանի դաժանությունը չէ միայն, այլ անսահման տիեզերքի հանդեպ մարդկային ուժի փոքրությունը, միլիոնավոր երևույթների պատճառի ու հետևանքի բացատրության անհնարինությունը: Այս երևույթի փիլիսոփայական բացատրությունը տալիս է ամենածեր իմաստունը. «... անհուն է, անսկիզբ, անափ, անըմբռնելի տիեզերքը իր ժամանակով ու տարածություններով, անհամար աստղեր ու արևներ են ծնվում ու մեռնում, ինչպես վայրկենական երևույթներ հավերժության մեջ, ինչպես մանր խխունջներ օվկիանոսի մեջ: Տիեզերքը լցված է ավելի շուտ հույլերով, մոլորակների անթիվ երամներով, քան մեծագոր մեր արքայի հսկայական շտեմարանները բրնձի հատիկներով, քան փեթակները՝ մեղուների պարսերով...» (ն.տ., էջ 119-120): Ըստ այս ծեր իմաստունի՝ անգամ անհամար, անհամար դարերը չեն կարող պարզել երևույթներն ու դրանց պատճառները: Մարդու և անձամբ իր անկարողությունն զգալով՝ Բողոքիսանը հրահանգում է հրովարտակել, որ պետք է սպանել Միտքն ու Ոգին, որովհետև դրանք տանում են դեպի պատճառների բացահայտման անհնարինություն և անհուսություն: Եվ Բողոքիսանը ինքնասպան է լինում: Մահից առաջ նա պատվիրում է ապրել անգիտության մեջ՝ ուրախ և երջանիկ: Գուցե կարելի է մտածել, որ Բողոքիսանի դաժանությունը և բռնակալ լինելը նրա հոգեբանական ապրումների և տիեզերքի բնույթը ճանաչել չկարողանալու անգործությամբ են պայմանավորված: Երկրներ նվաճած Բողոքիսա-

նը անգոր է իրեն հուզող հարցերի պատասխանն ստանալ, և այդ անգորությունը ոչնչացնում է իրեն իր իսկ աչքում: Մեփական ոչնչության ըմբռնումը նրան ինքնասպանության է դրդում: Քրիստոսից 200 տարի առաջ ստեղծված այս պատմության արձագանքը կարելի տեսնել Աստվածաշնչում. կենաց ծանոթից անմահական խնձոր ուտելու համար Ադամն ու Եվան վռնդվում են դրախտից, որի պատճառը արգելված, թերևս ավելի ճիշտ՝ անհասանելիի սահմանը խախտելն է, մարդուն տրված չէ այդ հնարավորությունը: Թերևս լինեն վիճաբանողներ, ովքեր կարող են բազմաթիվ օրինակներ բերել վերջին մեկ-երկու դարերի գյուտերից, որոնք վերաբերում են տիեզերքին: Բայց ո՞վ կարող է ասել, թե այդ գյուտերը չհայտնաբերված երևույթների քանի տոկոսն են կազմում...

Այլ իմաստ ունի «Չինգիզ-խանը»՝ հավանաբար ավանդությունը, որի հիմքում այն իմաստությունն է, որ մարդու հզորությունը ժամանակավոր երևույթ է, մահը՝ հավերժական, հզոր, և երիտասարդ տարիքում մարդը չի մտածում կամ հազվադեպ է հիշում մահվան մասին՝ այն համարելով շատ հեռու և ոչ իր համար: Իսկ Չինգիզ խանի հզորությունն անվիճելի էր. «Ազգերի արյունով շաղախեց Չինգիզ-խանը Ղարա-Ղորումի պարիսպները, և ազգերի հազարհազար ու բյուր գանգերով բուրգ ու աշտարակ շինեց Չինգիզ-խանը» (ն.տ., էջ 122): Այլ է ծերացած խանը. սառել են զգացմունքները, անգամ մատղաշ գեղեցկուհիներին չի կարողանում համբուրել, նրանց մերկ ու գեղեցիկ մարմինները ոչ մի հույզ չեն արթնացնում նրա մեջ, ձի նստել այլևս չի կարողանում, սուր բռնել ևս...Նա հանդիմանում է վեզիրին, որ դավաճանաբար մահին ներս է թողել, իսկ մահը պատասխանում է. «Ես հեռվից չեմ եկել, ես միշտ քո մեջն էի, քեզից անբաժան. երբ երիտասարդ էիր ու առույգ, դու էիր ինձ հաղթում, բայց ես մաքառելով ուժերդ մաշեցի. հիմա հաղթահարված ես դու, վերջին խոսքդ ասա և գնանք...» (ն.տ., էջ 127): Ի տարբերություն Բողդիխանի, որ հետևորդներին պատվիրում էր ապրել անգիտակից կյանքով ու երջանիկ, Չինգիզխանը վեզիրին պատվիրում է թունավորել բոլոր ծովերն ու օվկիանոսները, որ իր հետ մեռնեն բոլորը: Բայց քանի որ դա հնարավոր չէր, ուստի Իսահակյանը պատմությունը վերջացնում է լրացուցիչ բացատրություն չպահանջող տողով. «Վեզիրը չլսեց խանի հրամանը, որովհետև Մահը բռնել էր նրա լեզուն» (ն. տ.):

Իսահակյանի մշակած չափածո առասպելները, ավանդավեպերը, գրույցներն ունեն խրատական, դաստիարակչական, փիլիսոփայական բովանդակություն: Օրինակ՝ «Աթթիլան և իր սուրը» առասպելը պատմում է Արևմուտքի դեմ Աթթիլայի դաժանության մասին, ով արյան մեջ թաթախեց «Եվրոպան մինչև Գալլիա» և ստացավ իր պատիժը՝ արդարացնելով այն ասացվածքը, թե սուր ճոճողը սրից կմեռնի: Իսահակյանի մշակումներում դավաճանները, բռնակալները և դաժան մարդիկ ստանում են համապատասխան պատիժը: Այդ մասին է պատմում «Յահվեի վրեժը» ավանդագրույցը, ըստ որի՝ մահվան

վիճակի հասած Մովսես մարգարեն երբ Յահվելին (Աստծուն) խնդրում է իրենից վանել օրհասի ժամը, մինչև ինքը հասնի հայրենի երկիր, Յահվեն պատժում է նրան՝ հայրենի երկրի ու ցեղի ուրացման համար, թեև դա եղել էր միայն մի պահ նրա կյանքում, երբ նա իրեն եզիպտացի էր համարել:

Բանախյուսական պոեմներին, խրատական առակներին ու գրույցներին զուգահեռ՝ Իսահակյանը կատարում է նաև փիլիսոփայական բնույթի թարգմանություններ, որոնց ակունքը ևս արևելյան է:

Անհրաժեշտություն չենք տեսնում մեկ առ մեկ անդրադառնալու Արևելքը ներկայացնող բոլոր ավանդություններին, գրույցներին ու առասպելներին, որոնք զգալի տեղ են գրավում Իսահակյանի գրական ժառանգության մեջ: Ընդհանրության մեջ այդ բոլոր գրույցներն ու առասպելները պատմում են մարդկային գոյի առանձնահատկությունների, կյանքի ու մահվան, կովի և ազատության, սիրո և դավաճանության, աշխարհաճանաչության, անցյալի ու ապագայի մասին: Փիլիսոփայական այդ մշակումներին առանձնահատուկ հմայք է տալիս Իսահակյանի ճոխ լեզուն, բանաստեղծական լիրիզմով հագեցած գեղեցիկ խոսքը: Ոչ պակաս կարևոր է նաև տարբեր ազգերի հայրենիքների աշխարհագրության իմացությունը կամ այլ կերպ՝ դրա կիրառությունը, ինչը ընթերցողին տեղափոխում է համապատասխան ժամանակ ու միջավայր:

ЖЕНЯ КАЛАНТАРЯН – *Аветик Исаакян и восточная культура* (к 150-летию со дня рождения Ав. Исаакяна). – В статье представлен глубокий интерес Исаакяна к восточной культуре. Еще в родном Казарапате Исаакян слушал беседы, сказки и песни ашуггов (народных певцов), которые оказали большое влияние на юношу и способствовали развитию его воображения. С одной стороны, романтические впечатления, полученные с детства, с другой стороны, воодушевление литературой восточных народов в годы пребывания в Европе под влиянием европейских философов (Ницше, Шопенгауэр, Кант и другие) и писателей (Гёте, Беранже, Дюма...) побуждают Исаакяна к обработке восточного фольклора. Однако Восток — это универсальное понятие, охватывающее национальный темперамент, религию, язык и философию разных наций и народов (индийцев, китайцев, японцев, египтян, персов, евреев...). В легендах, традициях и сказаниях, принадлежащих этим народам, Исаакян подчеркивает мировоззрение каждого народа, его нравы и обычаи. Исаакяну удастся выделить менталитет и поведение отдельных народов и сделать видимой непреходящую значимость мудрых идей, идущих из древнего мира.

Ключевые слова: культура, литература, философия, религия, легенда, сказка, предание, буддизм, зороастризм, мировоззрение

ZHENYA KALANTAPYAN – *Avetik Isahakyan and Oriental Culture* (On the 150th anniversary of Av. Isahakyan's birth). – The article presents Isahakyan's profound interest in Oriental culture. Already in his native Ghazarapat, Isahakyan had heard the conversations, tales, and songs of the ashughes (folk minstrels), which left a great impact on the young man and contributed to the development of his imagination. On one hand, the romantic impressions received from childhood, and on the other hand, the enthusiasm for the literature of Oriental

peoples during his years in Europe, influenced by European philosophers (Nietzsche, Schopenhauer, Kant, and others) and writers (Goethe, Béranger, Dumas...), drive Isahakyan toward the cultivation of Oriental folklore. However, the Orient is a universal concept that encompasses within itself the national amalgamation of different nations and peoples (Indian, Chinese, Persian, Japanese, Egyptian, Hebrew...), their language, religion, and philosophy. In the legends, traditions, and tales belonging to these peoples, Isahakyan emphasizes each people's worldview, customs, and traditions. Isahakyan succeeds in highlighting the mentality and behavior of individual peoples and making visible the enduring significance of wise ideas coming from the ancient world.

Key words: *culture, literature, philosophy, religion, legend, fairy tale, story, Buddhism, Zoroastrianism, worldview*

References

- Ինժիկյան Արամ, 1977. Avetik^h Isahakyan, Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 1977. Hishatakan, Yerevan, “Sovetakan Gօրօք” հրատ (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 1977. Yegkegi zhovovatօu, h. 5, “Sovetakan Gօրօք” հրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 1979. Yegkegi zhovovatօu, h. 6, “Sovetakan Gօրօք”, հրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 2001. Aforizmner. “Tigran Metօ” հրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avetik^h, 2014. Yegkegi liakatar zhovovatօu, h. 5, “Gitutօyun” հրատ., Yerevan (in Armenian).
 Isahakyan Avik, 2000. Avetik^h Isahakyan gitakan kensagrutօyun, girօk^h 1, Yerevan (in Armenian).
 Isahakyan Vigen, 2011. Hayrօs, Yerevan, “Gaspօrint” հրատ (in Armenian).
 Nazaryan Stepanos, 1851. Abul Kasem Feօdausi Tusskij, Tvoօretօ knigi tօagey izvestnoy pod nazvaniem Shax-Nameh, Moskva (in Russian).
 U. Sayid Eduard, 2025. Aօvelabanutօyun, Yerevan (in Armenian).